Ազդարարության Trumpet's Sound Վիոլ

52-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2021

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խաչը ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Մանր-մունր կանոններ ..... Ռեքս Տիրլավ

Սաղմոս 32. ..... Դոն Սթորմըր

Գերիշխան Աստված ..... Քաղված

Փողերի դատաստանները (1) ..... QMBC պանորամա

Անմեղ կյանքը ..... Նեյլ Բուքման

Երբ կյանքը կիտրոններ է տալիս ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Եթե նույնիսկ Նա սպանի ինձ ..... Քաղված

Ինչո՞ւ եմ քաղցկեղը կոչում ի՛մ օրհնությունը ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Խաչը

Ասում են, թե խաչը հորինված է պարսիկների կողմից 6-րդ դարում (մ.թ.ա.): Շատ չանցած՝ հույները սկսեցին հանցագործներին պատժել խաչելությամբ, իսկ հետո նույնը արեցին նաև հռոմեացիները:

Երբ Երուսաղեմը գրավված էր հռոմեացիների կողմից, հրեա ժողովուրդը ծանոթ էր խաչի պատժին: Երբ Հիսուսին դատում էին, բոլորը սկսեցին բացականչել. «Խա՛չը հանիր նրան, խա՛չը հանիր»:

«Հիսուսին նայելով՝ մեր հավատի Հեղինակին ու Կատարողին, որ Իր առջև եղած ուրախության համար խաչը հանձն առավ, ամոթն արհամարհեց ու նստեց Աստծո աթոռի աջ կողմում» (Եբր. 12:2):

Հիսուսը պատրաստակամորեն ընդունեց խաչի պատիժը, քանի որ առանց խաչի՝ փրկություն չկա մարդկության համար: Առանց արյուն թափելու՝ չկա մեղքի թողություն:

Ի՞նչ նշանակություն ունի խաչը մեզ համար այսօր: Շատերը դըժգոհում են՝ ասելով. «Իմ խաչը շատ ծանր է, իմ խաչը իմ ուժերից վեր է»: Այսպես ասելը նշանակում է, որ նրանք խաչի նշանակությունը ճիշտ չեն ըմբռնել: Նրանք մտածում են, թե այս կյանքի դժվարությունները խաչեր են, որոնք պետք է կրել: Հաճախ այս «խաչերը» պատրաստված են լինում մեր ձեռքով՝ մեր վարքագծի, լեզվի, վերաբերմունքի և բնավորության պատճառով: Բայց ի՞նչ էր խաչը Տեր Հիսուսի ժամանակ:

«Այն ժամանակ Հիսուսն Իր աշակերտներին ասաց. «Եթե մեկն ուզում է գալ Իմ հետևից, թող իր անձն ուրանա և իր խաչը վերցնի ու Ինձ հետևի»» (Մատթ. 16:24):

Առաջին դարում խաչը առօրյա խնդիրները չէին, խնդրահարույց դրացին չէր. այն առողջական խնդիր չէր: Խաչը մարդկանց տրված բան չէր, որն իրենց ավելի լավ քաղաքացիներ էր դարձնում:

Խաչը կրող մարդը իր մահը կնքելու ճանապարհին էր: Նա ինչ-որ

բան չէր ձեռնարկում ինքն իրեն ավելի լավ մարդ դարձնելու համար: Նա իր կյանքը ավարտելու եզրին էր:

Ուրեմն ի՞նչ նկատի ուներ Տերը խաչը վերցնել ասելով: Երբ Նա կրում էր Իր խաչը, Իր մահվան ճանապարհին էր: Մենք մեր խաչերը վերցնում ենք ու հետևում Նրան:

Կորնթացիներին ուղղված 1-ին նամակում Պողոսն այսպես է գրել. «Վկա եք դուք, որ իմ պարծանքն եք մեր Տեր Հիսուս Քրիստոսով, որ ես ամեն օր մեռնում եմ»: Ի՞նչ նկատի ուներ նա: Հնարավոր է՝ երկու բան.

- Նա պատրաստ էր Տեր Հիսուսի համար մահանալու: Շատ անգամ Ավետարանի հռչակման ժամանակ Պողոսի կյանքը վտանգի էր ենթարկվում:
- Նա ամեն օր մահանում էր իր անձի նկատմամբ: Իր անձնական ցանկությունները ոչինչ էին Տեր Հիսուսին գոհացնելու և Նրան հավատարմորեն ծառայելու համեմատ:

Յուրաքանչյուր հավատացյալ կանչված է խաչ կրելու. մենք այդպես ենք անում՝ Տիրոջ հանդեպ մեր հավատքի պատճառով: Ոմանց համար դա նշանակում է հալածանք և մահ, բայց բոլորիս համար այն նշանակում է մահանալ սեփական անձի համար և ապրել միմիայն Տեր Հիսուսի համար: Խաչը կրելը մեզ ավելի մոտ է պահում Տիրոջը, որին սիրում ու ծառայում ենք:

Հաջորդ անգամ, երբ կզգաք խաչի ծանրությունը, հիշե՛ք Հիսուսին, ով Իր Անձը տվեց աշխարհի փրկության համար:

Հ. Գ.

Ա Տիմոթեոս 2:1-3

1. Ուստի աղաչում եմ, ամեն բանից առաջ աղերսանք, աղոթք, բարեխոսություն և գոհություն մատուցել բոլոր մարդկանց համար,

2. հատկապես՝ թագավորների և բոլոր նրանց, որ իշխանության մեջ են, որպեսզի խաղաղ ու հանդարտ կյանք վարենք, աստվածապաշտությամբ և անկեղծությամբ:

3. Քանի որ սա է բարին ու ընդունելին մեր Փրկիչ Աստծո առջև:

Մանր-մունր կանոններ

Հռոմ. 14

Ի՞նչ է նշանակում քրիստոնյաների հետ ապրել, որոնց հավատքը տարբերվում է մեր հավատքից: Աստվածաշունչը լի է օրինակներով, որոնք նկարագրում են, թե ինչ է նշանակում ապրել որպես քրիստոնյա: Աստվածաշնչում քրիստոնյաները համեմատված են քարերի հետ, որոնց շինարարը, դրանք կողք կողքի դնելով, գեղեցիկ շինություն է կառուցում, որտեղ Աստված Ինքն է բնակվում: Մենք աղյուս չենք, այլ քար: Աղյուսե կառույցը շատ է տարբերվում քարե կառույցից: Աղյուսները շինհրապարակ են հասնում միատեսակ չափերով ու ձևով, դրանք պատրաստ են կողք կողքի դրվելու: Բոլոր աղյուսները նույն չափը ունեն, քանի որ նույն կաղապարից են դուրս եկել: Դրանք շատ կոկիկ տեսք ունեն: Բայց մենք՝ մարդիկս, կաղապարից նույն տեսքով դուրս չենք եկել: Իրականում մենք միասնություն ենք: Մենք ավելի շատ նման ենք տարբեր չափի ու ձևի քարերի: Ոչ մի քար շինհրապարակ չի հասնում կատարյալ ձևավորված՝ իր տեղը գրավելու համար: Շինարարը պետք է մանրացնի ու ձևավորի այդ քարերը, որպեսզի դրանք ի վերջո կողք կողքի տեղավորվեն:

Կողք կողքի տեղավորվելու համար մանրացնելու ու ձևավորելու գործընթացը կարող է շատ ցավոտ լինել, և գտնվելով քրիստոնեական համայնքում՝ մեզանից շատ ժամանակ չի պահանջվում սա հասկանալու համար: Ինչպե՞ս հարմարվենք մեր բոլոր տարբերություններով հանդերձ: Որպես քարեր՝ Աստծո սքանչելի կառույցում յուրաքանչյուրս գտնվում ենք այս գործընթացի տարբեր փուլերում:

Տկար հավատք ունեցող մարդիկ նույնքան թանկ են Աստծո համար, որքան ուժեղ հավատք ունեցողները: Նրանք նույնքան ապահով են Աստծո սիրո մեջ, որքան ուժեղ հավատք ունեցողները: Հարցն այն չէ, թե որքան է մեր հավատքը, այլ թե մեր ունեցած հավատքը որտեղ ենք գործադրում: Նույնիսկ հզոր Աստծո հանդեպ տկար հավատքը կարող է փրկել մեզ: Սակայն տկար հավատքը խանգարում է մեզ՝ Աստծո տված կյանքը վայելելու համար:

Ի՞նչ նկատի ունի Պողոսը տկար հավատք ասելով. «Մեկը հավատում է, թե ամեն բան կարելի է ուտել, բայց նա, որ տկար է, բանջարեղեն է ուտում»: Ենթադրությունն այն է, որ ուժեղ հավատք ունեցողը ուտում է այն, ինչ սիրում է: Հնագույն աշխարհում որոշ կրոններ արգելում էին միս ուտելը: Այդ կրոնական խմբերին հետևող մարդկանց սովորեցնում էին, թե միս ուտելը դժգոհեցնում է իրենց պաշտած աստվածներին: Հետո երբ այդ մարդիկ քրիստոնյա դարձան ու սկսեցին եկեղեցի հաճախել, տեսան, որ քրիստոնյաները Քրիստոսով ազատ էին միս ուտելու մեջ, եթե ցանկանային այդ: Նրանք Քրիստոսի մեջ ազատություն ունեին, և Աստված նրանց ամեն ինչ տվել էր վայելքի համար: Այնուամենայնիվ, այս նորադարձները չէին կարողանում ազատվել միս ուտելու մասին իրենց հին գաղափարներից: Ուստի նրանք մերժեցին Աստծո թույլ տվածը: Պողոսը այստեղ ասում է, թե մանր կանոններով կաշկանդվելը տկար հավատքի ախտանշան է:

Պողոսը մանր կանոնների և կանոնակարգերի այլ օրինակ է տալիս. «Մեկը մի օրը գերադասում է մյուսներից, իսկ մի ուրիշի համար բոլոր օրերը նույնն են: Թող ամեն մարդ իր մտքում լրիվ համոզված լինի» (հմր 5): Կարելի է եզրակացնել, որ տկար հավատք ունեցող մարդը օրերի նկատմամբ կասկածներ ուներ. օրերը դասակարգում էր ըստ կարևորության: Ուժեղ հավատք ունեցող անձը հավատում է, որ Աստված ստեղծել է շաբաթվա բոլոր օրերը, և պետք է այդ բոլոր օրերում Աստծուն փառք բերի: Պողոսը Կողոսացիներին գրեց՝ ասելով. «Այսուհետև ոչ ոք չդատի ձեզ ուտելու և խմելու համար, կամ տոների, ամսագլուխների և շաբաթների համար: Որոնք գալիք բաների ստվերն են, բայց մարմինը Քրիստոսինն է» (Կող. 2:16-17):

Միս ուտելու և շաբաթվա մեջ մեկ օրը սուրբ պահելու հարցը օրինակներ են, որոնց անդրադառնում է Պողոսը: Յուրաքանչյուր սերունդ կարծես իր ուրույն խնդիրներն ունի: Բոլորս ճանաչում ենք մարդկանց, ովքեր հավատքի որոշ հարցերի նկատմամբ խիստ կեցվածք ունեն, և կարծում եմ, որ մեզանից շատերը հավատքի որոշ հարցերի վերաբերյալ աննշան նախապաշարումներ ունեն: Սրանք բացարձակ բարոյական հարցեր չեն, այլ մանրուքներ, գաղափարներ, որոնք մարդիկ արտահայտում են իրենց հավատքի մասին: Այն

տպավորությունը կա, որ մանր-մունր կանոնների հետևող անձնավորությունը գերհոգևոր է, սակայն Աստվածաշունչը հակառակն է սովորեցնում: Մանր-մունր կանոնների հետևողը տկար հավատք ունեցող անձ է: Այդպիսիները պետք է Աստծուն խնդրեն, որ իրենց օգնի՝ անկեղծորեն պատասխանելու իրենց մասին կենսական նշանակություն ունեցող հարցերին. «Արդյո՞ք իմ պահած կանոնները Աստծո հանդեպ իմ ունեցած սիրո ու նվիրվածության արտահայտությունն են, թե՞ միջոց են, որին կառչում եմ Աստծուն համոզելու համար, թե ինձանով հաճություն ունենա: Արդյո՞ք սա ապացույց է, որ իմ հավատքը բավականաչափ ուժեղ չէ՝ հավատալու, որ Քրիստոսը բավարար է ինձ՝ Աստծո առջև արդար կանգնեցնելու համար»:

Այսպիսով, միմյանց ինչպե՞ս են վերաբերվում ուժեղ և տկար հավատք ունեցող մարդիկ: Երրորդ համարը երկու միտք է ընդգծում.

- Քրիստոսով ազատություն ունեցող ուժեղ հավատքի մարդիկ իրենց մանր-մունր կանոններով և թույլատրելիի ու անթույլատրելիի մասին անվերջ քննարկումներով ճնշում են տկար հավատք ունեցող մարդկանց: Վերջիններիս համար կարծես թե երազանք լինի այն օրը, երբ իրենք էլ պետք է սկսեն վայելել Քրիստոսով հասուն քրիստոնյայի ազատությունը:
- Տկար հավատք ունեցող մարդիկ դատապարտում են ուժեղ հավատք ունեցողներին: Նրանք չեն կարող պատկերացնել, թե ինչպես կարելի է առանց իրենց մանր կանոնները պահպանելու լուրջ քրիստոնյա լինել ու քրիստոնեական կյանք ապրել:

Ինչպե՞ս պետք է այս մարդիկ վերաբերվեն միմյանց: Պատասխանը ամփոփված է 1-ին համարի բայի մեջ: Ընդունեցե՛ք: Հաճախ երբ շփվում ենք մարդկանց հետ, ովքեր մեր տեսակետներից տարբեր տեսակետներ ունեն, հանդուրժում ենք նրանց, բայց պայման չէ, որ ընդունենք: Երբեմն նրանց մոտենում ենք թաքնված օրակարգով՝ համոզելու ընդունել մեր տեսակետը: Այդ ժամանակ ընդունում ենք նրանց: Թե ինչպես է դիմացինը արտահայտում իր հավատքն ու նվիրումը, լինի կանոններով կամ առանց կանոնների, դա մեր գործը

չէ: Մեր գործը ուրիշների հավատքը գնահատելը չէ, այլ նրանց ընդունելն է:

Աստված մեզ չի կանչել թշվառ կանոնների հետևելու: Նա կանչում է մեզ մեր պատկերացրածից ավելի լավ կյանքի՝ նոր կյանքի, նոր թագավորության մեջ, որտեղ արդարություն, խաղաղություն և ուրախություն է տիրում:

Ահա թե ինչու Քրիստոսը մահացավ, ահա թե ինչու է Քրիստոսն ապրում, և սա է այն սքանչելի կյանքը, որին Նա կանչում է յուրաքանչյուրիս:

Ռեքս Տիրլավ

Սաղմոս 32

32-րդ սաղմոսը երկրորդն է, որ վերնագրված է որպես ապաշխարության սաղմոս: Այնտեղ տեսնում ենք, թե ինչպիսի տանջանքների միջով է անցել սաղմոսերգուն նախքան ապաշխարությամբ Տիրոջը դառնալն ու իր հանցանքները խոստովանելը:

Սաղմոսը սկսվում է մի երանիով, ինչպես Սաղմոս 1-ը: Տիրոջ ճամփաներով քայլողը օրհնյալ անձ է. իսկ այս սաղմոսում օրհնյալ է նա, ում անօրինությունները թողնված են ու մեղքերը ծածկված են:

Սաղմոսում չարությունը չորս բառով է նկարագրված՝ անօրինություն (կամ անհնազանդություն), մեղք, հանցանք և նենգություն: Անօրինությունը որոշակի օրենքի խախտումն է. այն ապստամբություն կամ անհնազանդություն է: Մեղքն Աստծո դրած չափանիշից պակասելն է. Մենք նահանջել ենք (հաճախ դիտավորյալ) Նրա սահմանած չափանիշից: Հանցանքը սխալ արարքն է, մինչդեռ նենգությունը մեր մտադրությունների քողարկումն է, որպեսզի ուրիշները չիմանան մեր մեղքերի մասին:

Նախքան իր մեղքերը խոստովանելը Դավիթը փորձեց ճնշել մեղքի ցանկացած զգացում, բայց չկարողացավ: Լուռ մնալով՝ նա մաշվեց՝

անընդհատ հառաչելով: Աստծո ձեռքը ծանրացավ նրա վրա: Նրա ուժը թուլացավ, ինչպես ամառվա չորությունը:

Դավիթն ի վերջո ընդունեց իր մեղքը Տիրոջ առջև: Նա դադարեց իր անօրինությունը ծածկելուց: Նա իր հանցանքները խոստովանեց Տիրոջը և գիտակցեց, որ Աստված ներեց իր մեղքը: Այս սաղմոսից սովորում ենք օրհնությունների մասին, որոնք տրվում են այն անձին, ով իր մեղքը խոստովանում է Աստծուն:

- Նրա անօրինությունները ներված են: Եթե անձը ներված է, ապա արձակված է իր պարտավորություններից: Անձը, որի պարտքը ներված է, պարտավոր չէ վարկը մարել: Անձը, որի մեղքերը ներված են, ստիպված չէ իր մեղքերի տուգանքը վճարել:
- Նրա մեղքերը ծածկված են: Սա մեզ հիշեցնում է Քավության օրվա ծիսակատարությունը: Քահանայապետը ցուլի արյունով մտնում էր ամենասուրբ վայրը իր և իր ընտանիքի մեղքերի համար: Այնուհետև այծի արյունով մտնում էր ժողովրդի մեղքերի համար: Տապանակի քավության վրա սրսկված արյունը ժողովրդի ծածկոց էր համարվում մեղքերի համար: Հին Կտակարանի ժամանակներում, եթե անձի մեղքերը ծածկված էին, նա կարող էր շարունակել Աստծո հետ հաղորդակցվելը:
- Նրա անօրինությունը իրեն չի վերագրվելու: Այլ խոսքով՝ նա արդար է համարվելու: Այն անձը, ով կարող է օրենքը կատարելապես պահել, արդար է. նա օրենքի առաջ ուղիղ է, և օրենքը նրա դեմ որևէ պահանջ չունի: Բայց օրենքը խախտած անձը կարող է արդարանալ՝ վճարելով իր մեղքի տուգանքը: Սակայն մեղավորների համար անհնարին է սա, քանի որ մեղքի վարձքը մահ է, հոգևոր մահ: Սա Աստծուց հավիտենական բաժանում է նշանակում: Մեկը վճարեց մեր մեղքի տուգանքը: Հիսուս Քրիստոս արդարը մահացավ մեր մեղքի համար, որպեսզի եթե հավատանք Իրեն, արդար համարվենք: Հավատացյալի համար սա նշանակում է, որ իր անօրինությունը իրեն չի վերագրվելու:

Սաղմոսերգուն կոչ է անում բոլոր աստվածապաշտներին՝ աղոթելու Աստծո գտնվելու ժամանակ: Ովքեր այդպես անեն, Աստծո պաշտպանությունն են վայելելու: Ջրերի հեղեղների ժամանակ նրանք ապահով կլինեն: Այդպես է լինելու, քանի որ Տերը նրանց ապաստանն է: Նա ոչ միայն ապաստան է տրամադրում դժվարությունների պահին, այլև փառաբանության երգ է դնում նրանց բերանում:

8-րդ համարը կենտրոնական նշանակություն ունի սաղմոսում: Աստված ասում է, որ սովորեցնելու է մեզ մեր գնալու ճանապարհը: Հիշում ենք Տեր Հիսուսի խոսքը, որ ասել էր. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունն ու Կյանքը»: Մեզ առաջնորդելու համար Նա Սուրբ Հոգին ուղարկեց մեր գնալու ճանապարհին: Նա սովորեցնում է մեզ: Ավելին՝ Նրա աչքը մեր վրա է՝ պահպանելու և ուղղորդելու համար:

Մեզ հստակ ասվում է, որ ձիու կամ ջորու չնմանվենք: Ջորին համառության համբավ ունի, նա ավելի համառ է, քան ձին, բայց այս կենդանիներից ոչ մեկը հասկացողություն չունի, և նրանց պետք է սանձով ու պախուրցով վերահսկել, որպեսզի հնազանդվեն:

Ամբարիշտները հրաժարվում են Տիրոջ կամքին ենթարկվելուց և որպես արդյունք՝ շատ տանջանքների են հանդիպում կյանքում: Նրանք տարբերվում են Տիրոջը հուսացողներից: Ողորմությունն ու բարությունը պատելու են արդարներին:

Երբ խորհում ենք սրա մասին, լսում ենք Տիրոջով ուրախանալու և Նրանով ցնծալու պատվիրանը: Արդարներն իսկապես կարող են ուրախությունից երգել:

Այս սաղմոսը խրախուսում է մեզ խոստովանել մեր մեղքն այն պահին, երբ գիտակցում ենք մեր սխալը: Մենք պետք է թույլ տանք, որ Տերը մեզ սովորեցնի մեր գնալու ճանապարհը և առաջնորդի մեզ: Այդ ժամանակ մենք կվայելենք այն մարդու օրհնությունը, որի հանցանքները թողնված են ու մեղքերը ծածկված են:

Դոն Սթորմըր

❊ ❊ ❊

Գերիշխան Աստված

2003 թ.-ի սեպտեմբերի 11-ին Ռոբերտ Մեթյուզ անունով մի մարդ, որ Վերջինիա նահանգում է ապրում, հետևյալ պատմությունը պատմեց տեղական ռադիոկայանով:

«2001 թ. սեպտեմբերի 11-ից մի քանի շաբաթ առաջ իմացանք, որ տիկինս հղի է մեր առաջին զավակով: Այդ շրջանում նա փափագեց Կալիֆորնիա մեկնել՝ քրոջը այցելելու: Երբ օդանավակայան էինք ճանապարհվում, աղոթեցինք, որ Աստված ապահով ճամփորդություն շնորհի տիկնոջս: Հազիվ «ամեն» ասացինք, պայթյուն լսեցինք, և մեր ավտոմեքենան սկսեց ցնցվել, քանի որ անիվներից մեկը պայթել էր: Անիվն արագ փոխեցի, բայց թռիչքը բաց թողեցինք: Երկուսս էլ շատ նեղված տուն վերադարձանք: Քիչ անց հայրս, որը Նյու Յորքի ոստիկան էր, զանգահարեց և հարցրեց տիկնոջս օդանավի թռիչքի համարը: Երբ ասացի, որ օդանավը բաց ենք թողել, նա խորը շունչ քաշեց, ապա տեղեկացրեց, որ այդ նույն օդանավը Նյու Յորքի հարավային երկնասլաց Աշխարհի առևտրական կենտրոնին է բախվել: Այնքան ցնցված էի, որ չէի կարողանում խոսել: Հայրս ուրիշ լուր էլ ուներ մեզ հաղորդելու: Նա ուզում էր աղետի գոտի գնալ՝ օգնելու: «Չեմ կարող ձեռքերս ծալած նստել, պարտք եմ զգում ծառայությունս մատուցելու», - ասաց: Մտահոգ էի նրա ապահովության համար և ավելի, քանի որ նա երբեք իր կյանքը Քրիստոսին չէր հանձնել: Մի քիչ վիճաբանելուց հետո հասկացա, որ անօգուտ էր ասածներս, քանի որ մտքին դրել էր գնալ: Նա հեռախոսն անջատելուց առաջ ասաց. «Թոռնիկիս մասին լա՛վ հոգ տարեք»: Սրանք եղան հորս վերջին խոսքերը, որ լսեցի: Նա մահացավ ազատագրման աշխատանքում օգնելիս:

Տիկնոջս ապահովության ուրախությունը չքացավ հորս մահվան գույժի պատճառով: Աստծո հանդեպ բարկությամբ լցվեցի, նաև հորս ու ինքս իմ: Գրեթե երկու տարի Աստծուն մեղադրեցի, որ հորս տարավ, և զավակս երբեք չճանչեց պապիկին: Նաև սիրտս ցավում էր, որ հայրս, Հիսուսին չընդունած, անսպասելիորեն բաժանվեց մեզանից հավիտենապես:

Ապա սրանից երկու ամիս առաջ մի դեպք պատահեց, որ ամեն բան փոխեց: Մինչ տունը նստած էի տիկնոջս և զավակիս հետ, հանկարծ դուռը թակեցին: Երբ բացեցինք, տեսանք անծանոթ մի զույգ երեխայի հետ: Ամուսինը, ինձ նայելով, հարցրեց, թե հորս անունը Ջեյքոբ Մեթիո՞ւզ էր արդյոք: Երբ «այո» ասացի, նա անմիջապես ձեռքս բռնեց և ասաց.

- Ցավոք սրտի, առիթ չունեցա ձեր հոր հետ ծանոթանալու, բայց պատիվ ունեմ նրա որդուն հանդիպելու: Նա հուզմունքով բացատրեց, որ իր հղի կինը Նյու Յորքի Աշխարհի առևտրական կենտրոնում էր աշխատում և 2001 թ.-ի սեպտեմբերի 11-ին ահաբեկչական հարձակումից հետո քարակույտների տակ էր մնացել: Հայրս գտել էր նրան և ազատել: Աչքերս արցունքով լցվեցին, երբ մտածեցի հորս մասին, որ իր կյանքը զոհել էր այսպիսի մարդկանց փրկելու ժամանակ:

- Ուրիշ բան ևս ունեմ ասելու, - շարունակեց անծանոթը: - Մինչ հայրդ ջանում էր տիկնոջս ազատել, տիկինս վկայեց նրան և դեպի Քրիստոսն առաջնորդեց:

Այս լուրի լսելուց հետո սկսեցի հեծկլտալով լացել: Հիմա գիտեմ, որ երբ Երկինք գնամ, հայրս, Հիսուսի կողքին կանգնած, ինձ դիմավորելու է, և այս երախտապարտ ընտանիքը անձնապես շնորհակալություն է հայտնելու նրան:

Երբ այս զույգը տղա զավակ էր ունեցել, նրան կոչել էին Ջեյքոբ Մեթիուզ՝ հորս հիշատակին, որ իր կյանքը տվեց, որ այս մայրն ու որդին ապրեն:

Այս պատմությունը ևս մեկ անգամ ցույց է տալիս, թե մեր Աստվածը գերիշխան է և ամբողջ աշխարհի Կառավարիչը: Շատ բաների պատճառը չգիտենք, երբ աշխարհի այս կողմում ենք գտնվում, բայց մեր բաժինն է ամենակալ Աստծուն վստահելը ամեն պարագայում:

«Աստվածների մեջ, Տե՛ր, ո՞վ է Քեզ նման, Ո՞վ է Քեզ նման, սրբության մեջ փառավորված, օրհնություններով սքանչելի, հրաշքներ գործող» (Ելից 15:11):

Քաղված՝ «Օրհնաբեր նռնենին» գրքից

Փողերի դատաստանները (1)

Ներածություն

Այս և նախորդ սերտողությունում դիտարկում ենք այն դատաստանները, որոնք տեղի են ունենալու երկրի վրա Նեղության ժամանակաշրջանում՝ Եկեղեցու հափշտակությունից ու Քրիստոսի երկրորդ գալստյան միջև ընկած յոթ տարիների ընթացքում: Այժմ Հովհաննես առաքյալին տրվում է դատաստանների տեսիլք, որոնք թափվելու են երկրի վրա Նեղության ժամանակաշրջանի վերջին 3.5 տարիների ընթացքում: Աստվածաշնչում այն կոչված է Մեծ նեղություն (Հայտ. 7:14, հմմտ. Մատթ. 24:21): Այս դատաստանները թափվելու են, երբ փողերը հնչեցվեն, և թվում է՝ դրանք ավելի խիստ և ուժեղ են լինելու 6-րդ գլխում նկարագրված կնիքի դատաստաններից:

Երբ 4-րդ հրեշտակը հնչեցնի իր փողը, երկնքում թռչող մի հրեշտակի ձայն է լսվելու, որը բարձրաձայն գոչելու է երեք վայեր (դժվարություն կամ սարսափ), որոնք առնչվելու են 5-րդ, 6-րդ և 7-րդ փողերին (տե՛ս Հայտ. 8:13, 9:12, 11:14, 12:12): Սա ցույց է տալիս, որ այս դատաստանները ավելի խիստ են լինելու, քան առաջին չորս հրեշտակների հայտարարած դատաստանները:

9-րդ գլխում մեզ ներկայացվում է մի վայր, որը կոչվում է անդունդ (Հայտ. 9:1, 2, 11, տե՛ս նաև 11:7, 17:8, 20:1, 3): Մենք իմանում ենք, որ դա չար հոգիների բնակության վայրն է, նաև այն վայրը, որտեղ սատանան բանտարկվելու է 1000 տարի:

10-րդ գլխում մեկ այլ զորավոր հրեշտակ է իջնում երկնքից (հմմտ. Հայտ. 5:2, 18:10), որի միջոցով Հովհաննեսը ստանում է յոթ որոտների ձայները: Բայց Հովհաննեսին թույլ չի տրվում գրել այն, ինչ լսում է (հմմտ. Բ Կորնթ. 12:4): Այնուամենայնիվ, նրան տրվում է մի փոքրիկ գրքույկ, որը նա պետք է ուտի:

11-րդ գլխում երկու վկաներ են (Եղիայի և Մովսեսի ոգով ու զորությամբ եկած – տե՛ս Հայտ. 11:6) հայտնվում Երուսաղեմում, որտեղ նրանք մարգարեանում են 1260 օր, այսինքն՝ 3.5 տարի: Վկայության վերջում Աստված թույլ է տալիս, որ նրանց սպանեն, բայց 3զ օրից

աստվածային միջամտությամբ նրանք նոր կյանք են ստանում, իսկ հետո ամպով բարձրանում երկինք:

7-րդ հրեշտակը հնչեցնում է իր փողը, ու երկնքում բարձր ձայներ են լսվում, որոնք հայտարարում են՝ ասելով. «Այս աշխարհի թագավորությունները դարձան մեր Տիրոջն ու Նրա Օծյալինը...»: Այնուհետև 24 երեցները երեսնիվայր ընկնում են երկրպագության մեջ և գովաբանում ու գոհություն են հայտնում Աստծուն (Հայտ. 11:15-18):

Հաջորդ երկու գլուխներում (12 և 13) խորհրդանիշների օգտագործմամբ մեզ են ներկայացվում Մեծ նեղության հիմնական դերակատարները (կամ գործակալները)՝ արևը իր վրա հագած կինը, մեծ կարմիր վիշապը, արու զավակը, Միքայել հրեշտակապետը, ծովից դուրս եկող գազանը, երկրից դուրս եկող գազանը: Կինը (Իսրայել ազգը) ծնում է արու զավակին (Քրիստոս Մեսիային), իսկ վիշապը (սատանան) անհաջող փորձում է ոչնչացնել Նրան: Այնուհետև երեխան հափշտակվում է Աստծո մոտ ու նստում Իր գահին:

Այնուհետև կարդում ենք տեսիլքի մասին, որը ներկայիս եկեղեցական շրջանից այն կողմ է ձգվում. երկնքում պատերազմ է լինելու Միքայելի, իր հրեշտակների ու սատանայի և նրա հրեշտակների միջև: Միքայելը հաղթելու է, և սատանան ցած է գցվելու երկիր՝ մեծ ուրախություն պատճառելով երկնքում:

Այնուհետև Աստված հրաշքով վերցնելու է կնոջը ու թաքցնելու է նրան 3.5 տարի (Մեծ նեղության 7 տարվա վերջին մասը): Վիշապը (այսինքն՝ սատանան) փորձելու է ոչնչացնել նրան, բայց նրա մոտ չի ստացվելու դա:

Երկու մեծ և չար անձնավորություններ են ի հայտ գալու, և վիշապը նրանց տալու է իր զորությունն ու իշխանությունը:

Հրեշտակները հնչեցնում են վեց փողերը (8:6 - 9:21)

Այս հատվածում կարդում ենք հրեշտակների կողմից հնչեցրած հաջորդական վեց դատաստանների մասին: Փողերը հնչեցնելիս դատաստանները թափվում են երկրի վրա: Ինչպես վերևում նշեցինք, այս դատաստանները տեղի են ունենալու Մեծ նեղության ժամանակաշրջանում:

Առաջին հրեշտակը հնչեցրեց փողը, եղավ կարկուտ ու արյունախառն կրակ և գցվեց երկրի վրա: Արդյունքում՝ այրվեց երկրի երրորդ մասը և ծառերի մեկ երրորդ մասը, ու այրվեց ամբողջ կանաչ խոտը: Հովհաննեսն այսպես նկարագրեց տեսիլքում տեսածը: Ոմանք ենթադրում են, որ Հովհաննեսն իրականում միջուկային պատերազմ տեսավ (որն արդեն առաջարկված էր վեցերորդ կնիքի դատաստանի համար), որը մեկ ակնթարթում նման աստիճանի աղետի հանգեցրեց: Մթնոլորտը կլցվի շնչահեղձ ծխով, ու կոչնչանա աշխարհի սննդամթերքը (օրինակ՝ ցորենը, գարին, բրինձն ու վարսակը)՝ առաջացնելով համաշխարհային սով: Դրան կհաջորդեն համաճարակային հիվանդությունները, և միլիոնավոր մարդիկ ու կենդանիներ կմահանան:

Երկրորդ փողի դատաստանի ժամանակ Հովհաննեսը մի հսկայական այրվող լեռան նման մի բան տեսավ, որը ծովը գցվեց, և ծովի մեկ երրորդը արյան վերածվեց՝ ոչնչացնելով ծովային արարածների և նավերի մեկ երրորդը: Դարձյալ ոմանք ենթադրում են, որ Հովհաննեսն ականատես է եղել միջուկային պատերազմի հետևանքով ավերածությունների, բայց դա կարող է նաև վերաբերել հրաբխի հսկայական ժայթքմանը: Աշխարհն ականատես է եղել հրաբխային ժայթքումների, որոնք ազդեցություն են թողել մեծ տարածքների վրա և երկրի մթնոլորտ են արտանետել ծխի, փոշու և մոխրի հսկայական ծավալներ՝ ամիսներ շարունակ արգելափակելով արևի լույսը: Այդպիսի ժայթքումների օրինակներ են (ա) Սանտորինին՝ Հունաստանի արևելքում գտնվող փոքր կղզին, որը ժայթքել է մ.թ.ա. 1650 թ.-ին, որի արդյունքում մեծ ցունամի է առաջացել ու միլիոնավոր մարդիկ են զոհվել, (բ) Վեզուվ լեռը՝ Իտալիայում, որը ժայթքել է մ.թ. 79 թ.-ին՝ ավերելով Պոմպեյ և Հերկուլանեմ քաղաքները, (գ) Կրակատոան՝ Ինդոնեզիայում, որը ժայթքել է 1883 թ.-ին՝ առաջացնելով հսկայական ցունամի, որի հետևանքով զոհվել են հազարավոր մարդիկ: Երրորդ փողի դատաստանի ժամանակ Հովհաննեսը ջահի պես բոցավառվող մեծ աստղ տեսավ, որը երկնքից ընկավ՝ թունավորելով գետերի և ջրի աղբյուրների մեկ երրորդը: Այնուհետև մեզ հատուկ ասվում է. «Ջրերի մեկ երրորդ մասն օշինդր դարձավ, և շատ մարդիկ այդ ջրերից մեռան, քանի որ դառն էին» (Հայտ. 8:11):

Դարձյալ առաջ է քաշվում այն միտքը, որ այս մեծ բոցավառ աստղը միջուկային պատերազմի մեկ այլ օրինակ է: Այնուամենայնիվ, դա կարող է լինել նաև հսկայական երկնաքար կամ գիսաստղ: Անցյալում եղել են նման դեպքեր, օրինակ՝ «Barringer» խառնարանը՝ ԱՄՆ-ում՝ 1.2 կմ տրամագծով, «Chicxulub»-ը՝ Մեքսիկայում՝ 170 կմ տրամագծով, և «Aorounga»-ն՝ Աֆրիկայում՝ 17 կմ տրամագծով: «Chicxulub»-ի հետևանքով միլիարդավոր տոննա տարատեսակ նյութեր արտանետվեցին մթնոլորտ՝ կես տարի արգելափակելով արևի լույսը: Դա կարող է հանգեցնել երկրի վրա ջերմաստիճանի նվազմանը, ընդհուպ սառեցման կետի հասնելը:

Չորրորդ փողի դատաստանի ժամանակ արևի մեկ երրորդ մասը և լուսնի մեկ երրորդ մասը ու աստղերի մեկ երրորդ մասը զարկվեցին, այնպես որ նրանց մեկ երրորդ մասը խավարեց: Օրվա մեկ երրորդ մասը անլույս եղավ, ինչպես նաև՝ գիշերվանը: Թվում է, թե սա ուղղակի աստվածային միջամտության արդյունք է: Աստվածային նման միջամտությունը մարդկանց մոտ վախ կառաջացնի, բայց մենք հարցնում ենք, արդյոք դա նրանց ապաշխարության ու Քրիստոսին դիմելու կառաջնորդի՞, թե՞ ոչ (հմմտ. Հայտ. 9:20-21, 16:11):

Այդ պահին Հովհաննեսը լսում է մի թռչող հրեշտակի երեք վայերի (նեղություն կամ սարսափ) հայտարարությունը, որոնք ուղեկցվելու են մնացած երեք փողերի դատաստաններին: Ինչ-որ սարսափելի բան է սպասվում: Մինչ առաջին չորս փողերի դատաստանները վերաբերում էին հիմնականում երկրին, մնացած երեքը վերաբերում են ուղղակիորեն մարդկանց:

QMBC պանորամա

(Շարունակելի)

❊ ❊ ❊

Անմեղ կյանքը

Եկեք փորձենք պատկերացնել, թե որքան տարբեր կլիներ ձեր կյանքը, եթե ընդհանրապես մեղք չունենայիք: Ինչո՞ւ: Քանի որ շատ մարդիկ կարծում են, թե իրենց մեղքերը քիչ են ու աննշան, չեն գիտակցում, թե որքան է մեղքը ապականել իրենց: Սա հեշտ վարժություն չէ, բայց արժե՛ փորձել:

Այսպիսով, ձեր անմեղ կյանքը կառավարվում է սիրով, նախ՝ Աստծո, ապա մարդկանց նկատմամբ: Ընտանիքի, ընկերների, գործընկերների և անծանոթների հետ ձեր բոլոր փոխհարաբերություններում արտացոլվում է Աստծո և մերձավորների հանդեպ ձեր ունեցած սերը: Ուստի երբեք չեք ձախողի ուրիշների կամ Աստծո հանդեպ ձեր պարտականությունները կատարելու մեջ:

Աստծո հանդեպ ձեր սերը ամբողջական կլինի, եթե կիրառվի սրտով, հոգով, մտքով և զորությունով: Ձեր սիրո մեջ շեղում կամ թերություն չի գտնվի, քանի որ այն այնքան է, որքան պետք է: Ձեր սերը երևում է Աստծուն հնազանդվելու մեջ. հնազանդություն, որը հոժարությամբ է, ուրախությամբ և անմիջականությամբ: Ձեր հավատքն առ Աստված երբեք չի տատանվի, և ձեր աղոթքն իրական կլինի, առատ, մտերիմ ու անկեղծ:

Մերձավորների հանդեպ ձեր սերը նույնպես հոժարական և ամբողջական կլինի: Դուք երբեք չեք դժգոհի սեփական անձից առաջ ուրիշների մասին հոգալու համար և երբեք չեք ափսոսա, որ որևէ իրավիճակում կարող էիք ավելի լավը կամ շատը անել: Դուք երբեք ծույլ, եսասեր կամ եսակենտրոն չեք լինի, չեք զբաղվի ինքնագթությամբ կամ վրեժխնդրության մտքերով: Երբեք ձեր անձը չեք բարձրացնի կամ ուրիշներին չեք ստորացնի, սուտ վկայություն չեք տա, այլ միայն ճշմարտությունը կասեք սիրով: Դուք երբեք ստիպված չեք լինի ներողություն խնդրել կատարվածի կամ ասված խոսքի համար, կամ չկատարվածի ու չասված խոսքի համար: Դուք երբեք ստիպված չեք լինի ետ վերցնել չմտածված կամ հիմարաբար արտաբերած խոսքը:

Ձեր կյանքը կբնութագրվի խաղաղությամբ, որին չեն հաղթի դժվար պարագաներն ու վիրավորանքները, իսկ ձեր թարմացող ուրախությունը նկատելի կդառնա ձեր շուրջը գտնվող վախեցած, զայրացկոտ, լկտի և ագահ մարդկանց մեջ: Դուք չեք հպարտանա: Ձեր խոնարհությունն ու պարզ գոհունակությունը օրհնություն կլինեն բոլոր նրանց համար, ովքեր շփվում են ձեզ հետ: Դուք նույն մարդը կլինեք թե՛ մուրացկանի և թե՛ թագավորի հետ շփվելու ժամանակ:

Վերը նշվածներից ոչ մեկը չեք կարող ձեռք բերել վարժություններիի, դասընթացների կամ խորհրդածության միջոցով: Այն պետք է ձերը լինի ձեր ճանապարհը սկսելու ժամանակից՝ ամենավաղ մանկությունից, և միայն տարիներ անց այն կհասունանա ու արմատ կգցի:

Դուք երբեք չէիք իմանա մեղքի տանջանքների մասին, չէիք վախենա ապագա դատաստանից և երբեք ստիպված չէիք լինի խնդրելու ո՛չ Աստծո ողորմությունը, ո՛չ էլ մարդու ներումը: Դուք կհասկանայիք, որ ձեր մեջ ոչ մի մեղք չկա, ձեր մտքերի, խոսքերի և գործերի միջև միշտ կատարյալ հետևողականություն և ներդաշնակություն կլիներ: Ձեր միտքը՝ մաքուր, սերը՝ իրական, կարեկցանքը՝ գործնական և աղոթքը անկեղծ կլիներ:

Կարելի է այս ցանկը երկարացնել, բայց մենք այնքան հեռու ենք վերոհիշյալ հրաշալի կյանքից: Ընդամենը մի քանի պահ լուրջ մտածելը կօգնի մեզ՝ հասկանալու, որ մեղքը դարձել է մեր էության մասը, և ոչինչ չենք կարող անել նրա ապականությունից խուսափելու համար:

Սիրելի՛ ընթերցող, Նազովրեցի Հիսուսը ապրեց այստեղ նկարագրված կյանքը և ավելին: Ոչ ոք երբևէ չի պնդել, որ ապրել է այնպես, ինչպես Նա: Մնացածս՝ ի ծնե մեղքի մեջ մեռած ենք:

Տեր Հիսուսն աշխարհ եկավ որպես մեղքի անմեղ պատարագ՝ մեր հոգիները փրկելու համար: Նա Իր Անձը զոհաբերեց, և Աստված Իր զորությամբ մեռելներից հարուցանեց Նրան՝ այդպիսով փրկության ճամփան բացելով մեզ համար:

Վստահ եմ, որ կարող եք տեսնել, թե որքան անհնար է Աստծո առջև սեփական թույլ ջանքերով արդարանալը:

Տեր Հիսուսի մահը, որին մենք էինք արժանի, մեր փրկության միակ հույսն է: Միայն Աստծո շնորհքով՝ մեր մեծ կարիքը խոստովանելով և մեր Փրկիչ Տեր Հիսուս Քրիստոսին վստահելով կարող ենք ճաշակել Աստծո հրաշալի ներումը, խաղաղությունն ու լիուլի կյանքը:

Արդյոք ձեր մեղքը ներվա՞ծ է: Տեր Հիսուսին ճանաչո՞ւմ եք որպես ձեր Փրկչի: Պատրա՞ստ եք Նրա հետ հանդիպելու:

«Որովհետև Աստված Իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ աշխարհը դատի, այլ՝ որ աշխարհը Նրանով փրկվի» (Հովհ. 3:17):

Նեյլ Բուգման

Երբ կյանքը կիտրոններ է տալիս

Հակոբոս 1

Ես շատ էի ուզում Կանադա գալ: Ընկերներիցս շատերը և մորեղբորս տղան արդեն Հունաստանից Կանադա էին գնացել: Ես ուզում էի օգնել իմ աղքատ ծնողներին, ովքեր դժվարանում էին խնամել ինձ ու քրոջս, ուստի Կանադա գնալու միտքն ուրախացնում էր ինձ:

Ծնողներս մորեղբորս դիմեցին ինձ հովանավորելու խնդրանքով, սակայն շատ հուսահատեցնող մերժում ստացան: Տխուր և կոտրված սրտով ես տնից դուրս եկա: Շատ դառնացած էի ու մտածում էի, որ կյանքը բոլորովին արդար չէ: Այլևս չգիտեի, թե ուրիշ ինչ կարելի էր անել, ուստի գնացի Աթենքի կենտրոն և մտա հունական ավիացիայի ռազմաօդային ուժերի գրասենյակ՝ որպես կամավոր գրանցվելու: Այստեղ ես ծառայեցի քսանութ ամիս:

Միաժամանակ դիմեցի Կանադա գնալու համար, որի վավերացման համար պահանջվեց քսանչորս ամիս: Ես մտածեցի, որ ամեն

բան ճիշտ ժամանակին եղավ. ես հրաժեշտ տվեցի ընտանիքիս անդամներին և ընկերներիս ու գնացի Կանադա:

Երբ հետադարձ հայացք եմ գցում, տեսնում եմ, որ Աստծո մատը կա դրա մեջ: Աստված կյանքի կողմից ինձ հրամցված կիտրոնը քաղցր հյութ դարձրեց: Վստահ եմ, որ քո կյանքում էլ է եղել այդպիսի բան: Կյանքը հաջողության քաղցր պտուղների փոխարեն երբեմն մեզ կիտրոններ է տալիս:

Գուցե քո ստացած կիտրոնը ծանր հարված չէ քեզ համար՝ թեթև կորուստներ, բարկության թեթև պատճառներ: Սակայն կան նաև ավելի լուրջ հարվածներ, ինչպես օրինակ՝ աշխատանքդ, սիրած էակիդ, ունեցվածքդ կամ հարազատիդ կորցնելը: Ամեն դեպքում, անկախ տարիքից, մարդը սովորում է ու հասկանում, որ կյանքը կարող է կիտրոններ էլ հրամցնել: Հարցն այն է, թե ինչպես ենք մենք վարվում այդ կիտրոնների հետ: Հակոբոսի գիրքը անդրադառնում է այդ հարցին և օգտագործում է «նեղություններ» բառը:

Հակոբոսն ասում է, որ կան նեղություններ, որոնք Աստծուց են և կյանքի դասեր են տալիս. «Բոլորովին ուրախություն համարեցե՛ք, եղբայրնե՛ր, երբ որ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք՝ գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում... Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձության, քանզի եթե փորձվելով ընտիր գտնվի, կյանքի պսակը կառնի, այն, որ Տերը խոստացավ իրեն սիրողներին» (Հակ. 1:2-3, 12):

Նեղությունները կրթում են մեզ: Անհրաժեշտ է «նեղությունները» չշփոթել «գայթակղությունների ու ցանկությունների» հետ: Ցանկությունները մեզանից են ծնվում ու մահվան են առաջնորդում:

Գայթակղության ժամանակ ոչ ոք չպետք է ասի. «Ոչ ոք, ով փորձության մեջ է, չասի, թե Աստծուց է փորձվում, որովհետև Աստված չար բաներով չի փորձվում, ինքն էլ ոչ մեկին չի փորձում: Բայց ամեն մեկը փորձվում է բուն իր ցանկությունից հրապուրված և խաբված» (Հակ. 1:13-15):

Քանի որ Աստված թույլ է տալիս, որ մեր կյանքի նեղությունները կոփեն մեզ, և քանի որ նրան մեղադրելու, տրտնջալու կամ նրա դեմ

ըմբոստանալու, մեղք գործելու ու մեր կյանքը խառնաշփոթի վերածելու վտանգ կա, մենք պետք է համոզված լինենք, որ ճիշտ ենք արձագանքում մեր կյանքի նեղություններին:

Հակոբոս 1:19-ի հետևյալ բանաձևը կօգնի մեզ՝ առավելագույնս դաս քաղելու մեր նեղություններից: Երբ կյանքը քեզ կիտրոն է տալիս, դու դարձրո՛ւ այն քաղցր հյութ: Ահա՛ աշխարհի ամենաքաղցր հյութի բաղադրատոմսը.

Լսելու կարողությո՛ւն ունեցեք

Ո՞ւմ պետք է լսենք: Իհարկե, մարդկանց լսելը ճիշտ է ու անհրաժեշտ: Երբեմն այնքան ենք կենտրոնանում մեր հոգսերի և անձնական շահերի վրա, որ չենք լսում, թե մեզ ինչ են ասում ուրիշները:

Հակ. 1:19-ի համատեքստից հասկանում ենք, որ խոսքը նեղությունների ժամանակ լսելու մասին է: Երբ նեղության մեջ ենք ընկնում, մեզանից բացի ոչ ոքի չենք կարողանում լսել: Երբ մեր ծրագրերը խափանվում են կամ անհարմար իրավիճակներում ենք հայտնվում, նեղսրտում ենք: Երբ որևէ մեկը փորձում է մեզ ինչ-որ բան ասել, չենք ուզում նրան լսել: Սակայն Հակոբոսը չի խոսում ուրիշներին լսելու մասին. նա խոսում է Աստծո Խոսքը լսելու և նրան հնազանդվելու մասին:

«Բայց խոսքը կատարո՛ղ եղեք և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակ. 1:22):

Աստվածաշունչն Աստծո բաղադրատոմսի գիրքն է: Եթե չես հետևում քաղցր հյութ պատրաստելու բաղադրատոմսին, բնականաբար քաղցր հյութ չես ունենա: Երբ դժվարության մեջ ես, իսկույն լսի՛ր Աստծո Խոսքը, հնազանդվի՛ր նրան և օգնի՛ր Աստծո ժողովրդին:

Շա՛տ լսիր, քի՛չ խոսիր

Դարձյալ սա վերաբերում է մեր դժվարություններին: Խոսելիս դու չես լսում: Եթե չես լսում, ապա չես սովորում: Եթե չես սովորում, ապա չես աճում: Եթե չես աճում, ապա ոչ թե հաղթում ես, այլ պարտվում: Կարճ ասած՝ լո՛ւռ մնա և լսի՛ր, թե Աստված ինչ է ասում քեզ:

Մի՛ շտապիր բարկանալ

Ես ապշում եմ, թե որքան հաճախ է բարկությունը դառնում ընդհարումների կամ ֆիզիկական ու հուզական խնդիրների պատճառ: Երբ մարդիկ գալիս են ինձ մոտ խորհրդատվության, վերջում հաճախ ենք խոսում բարկության մասին: Բարկությունը սպանում է քեզ և այն մարդուն, որի վրա բարկացած ես:

Որպես ամփոփում՝ ասենք, որ քաղցր հյութի բաղադրատոմսը ներառում է գործողություններ, խոսքեր և մոտեցումներ: Նեղություններիի մեջ քրիստոնյաները հաճախ ճիշտ քայլեր են անում, բայց ասում են սխալ բառեր և ունենում են սխալ մոտեցումներ: Մինչև երեք ոլորտներն էլ ճիշտ չլինեն, չի կարող հոգևոր աճ և հաղթանակ լինել:

Նեղության մեջ փորձի՛ր առավելագույնս դասեր քաղել: Թող քո քայլերը, խոսքերն ու մոտեցումները հիմնված լինեն աստվածաշնչյան սկզբունքների վրա: Քրիստոնյաները պետք է դժվարությունները հաղթահարեն իրենց հավատին համապատասխան կերպով:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

«[1]Ամեն բան իր ժամանակն ունի, ու երկնքի տակ եղող ամեն ձեռնարկ՝ իր ժամանակը.
[2]ծնվելու ժամանակ և մեռնելու ժամանակ, տնկելու ժամանակ
և տնկվածն արմատախիլ անելու ժամանակ:
[3]Սպանելու ժամանակ և բժշկելու ժամանակ,
քանդելու ժամանակ և շինելու ժամանակ,
[4]լալու ժամանակ և ծիծաղելու ժամանակ, սգալու ժամանակ և պարելու ժամանակ,
[5]քարերը գցելու ժամանակ և քարեր հավաքելու ժամանակ,
գրկելու ժամանակ և գրկից հեռացնելու ժամանակ,
[6]փնտրելու ժամանակ և կորցնելու ժամանակ, պահելու ժամանակ և դեն գցելու ժամանակ,
[7]պատռելու ժամանակ և կարելու ժամանակ, լռելու ժամանակ ու խոսելու ժամանակ.
[8]սիրելու ժամանակ և ատելու ժամանակ,
պատերազմի ժամանակ և խաղաղության ժամանակ»:
(Ժող. 3:1-8)

Եթե նույնիսկ Նա սպանի ինձ, ես Նրան եմ հուսալու

Միքայել եղբայր Նազարյանը, որ մեր եկեղեցու տարեց եղբայրներից էր և Դեր Զորի սպանդից կենդանի ավազահատիկը, այսպես է վկայում աքսորի ճանապարհին իր մոր և քրոջ հետ ունեցած մի փորձառության մասին:

Մենք էլ, գաղթականության ցույը ձեռքներիս, թողեցինք ամեն բան ու հեռացանք: Եվ շատ օրեր թափառելով՝ վերջապես հասանք Ռաս-Էլ-Այն կոչված տեղը, ու փոքրիկ վրան դնելով՝ ութ ամիս այնտեղ մի քիչ հանգստացանք: Մի քանի ամսվա ընթացքում այնտեղ հավաքվեցին Թուրքիայի տարբեր քաղաքներից աքսորված վաթսունհինգ հազար հայ գաղթականներ:

Այդ դաժան, խեղճ վրանի տակ մեր թշվառ վիճակում՝ մորս օրինակելի կյանքը անմոռանալի է ինձ համար: Նա, ամեն օր վաղ առավոտյան ծնրադրած, ձեռքերը տարածելով՝ գոհունակությամբ և աղաչանքով աղոթելուց հետո մեղմ ձայնով սրտանց երգում էր. «Ալելուիա, համտլար ալելուիա» երգը: Մորս խորագիրն էր. «Եթե նույնիսկ Նա սպանի ինձ, ես Նրան եմ հուսալու» (Հոբ 13:15):

Այս գաղթավայրի անբացատրելի թշվառ կյանքը և ձմռան ցուրտը մահամերձ մի հիվանդությունով ինձ գետին տապալեցին: Օրեր շարունակ սաստիկ ջերմությամբ անզգայացած եմ եղել՝ գիշեր-ցերեկ զառանցելով: Եվ ահա մի օր տեսիլք կամ երազ տեսա ու քրտինքի մեջ կորած՝ աչքերս բացեցի: Տեսա, որ մայրս և քույրս նստած, դառնապես լացում էին ու ողբում՝ կարծելով, թե ես մահացել եմ: Ասացի. «Մամա՛, մի երազ տեսա, շնորհալի նայվածքով մի մարդ, մեջքին ծանր բեռ, քայլում էր: Վազելով նրան մոտեցա ու օգնությունս առաջարկեցի, բայց նա՝ գորովագութ նայվածքով ինձ նայեց ու ասաց. «Որդյա՛կ իմ, այս բեռը քո մեղքերն են: Թո՛ղ ես տանեմ: Բայց քո ձեռքը տո՛ւր, որ բռնեմ, ու ինձ հետևի՛ր»»: Այդ պահին մայրս իր ձեռքերը տարածեց ու գոհացավ Տիրոջից և ասաց ինձ. «Ո՞հ,

տղա՛ս, այս 40 օրերում, երբ դու մարել էիր, չէիր ուտում, չէիր խմում, չէիր խոսում, Հիսուսը ձեռքդ բռնեց, քեզ կյանք տվեց: Քույրդ և ես այս աքսորավայրում պիտի մահանանք, բայց դու ապրելու ես: Իմ խրատն այս է. «Դու քո Տեր Աստծուդ չմոռանա՛ս»:

Հազիվ թե երկու օր անցավ, 1916 մարտ ամսվա վերջում մահագույժը հնչեց: Ռաս-Էլ-Այնում գտնվող 65,000 հայ գաղթականները զրկվեցին իրենց վրաններից, ու մեծից փոքրին կողոպտեցին ու վերջին պատառ չոր հացը խլեցին մեր ձեռքից: Թուրք ձիավոր ժանդարմները մեզ քշեցին դեպի Դեր Զորի անապատը, դեպի սպանդանոց, դեպի հայի Գողգոթան՝ թուրքի ծրագրած դաժանաբարո ազգասպանության ոճիրը գործադրելու համար:

Մի օր հանկարծ ամեն կողմից վայրենի արաբների խուժանը, կատաղած գազանների նման, բրերով ու սրերով հարձակվեց մեզ վրա, ու ջարդ սկսվեց. մայր, քույր, եղբայր իրար կորցրինք: Խուճապի մատնված ամբոխի մեջ, երբ վերջին անգամ քրոջս հանդիպեցի, սրրտի վրա սեղմած Սուրբ Գիրքը ինձ տվեց ու ասաց. «Եղբա՜յր, ուժասպառ եմ, այլևս չեմ կարողանում քայլել: Վերցրո՛ւ Սուրբ Գիրքս, արագ վազի՛ր ու գտի՛ր մամային»:

Քրոջս հուսահատ վերջին խոսքերը դեռ հնչում են ականջիս մեջ:

Իմ ընտանիքից միայն ես փրկվեցի, որպեսզի պատմեմ Աստծո հրաշքները:

«Չեմ մեռնելու, այլ ապրելու եմ, որ Տիրոջ գործերը պատմեմ» (Սաղ. 118:77):

Քաղված

❊ ❊ ❊

Ա Տիմոթեոս 6:11-12

11. Բայց դու, ո՛վ Աստծո մարդ, փախի՛ր այս ամենից և գնա արդարության, աստվածապաշտության, հավատի, սիրո, համբերության ու հեզության ետևից:

12. Պատերազմի՛ր հավատի բարի պատերազմը, պահի՛ր հավիտենական կյանքը, որի մեջ կանչվեցիր ու դավանեցիր բարի դավանությունը շատ վկաների առաջ:

Ինչո՞ւ եմ քաղցկեղը կոչում ի՛մ օրհնությունը

«Որովհետև մարմնի մարզումը քիչ բանի համար է օգտակար, իսկ աստվածապաշտությունը՝ օգտակար է ամեն ինչի համար՝ թե՛ ներկա, և թե՛ գալիք կյանքի խոստումն ունենալով» (Ա Տիմ. 4:8): Ես երբեք չեմ իմացել, թե որքան կարիք ունեի, որ Աստծո Խոսքը բնակվի իմ մեջ, մինչև որ գրեթե 13 տարի առաջ չախտորոշվեց քաղցկեղս՝ Գլիսոնի գնահատականով 9-ը, իսկ PSA-ը՝ 73 (ներկայիս):

Քաղցկեղը ճանապարհորդություն է: Այն ամենօրյա զբոսանք է Աստծո հետ, և ես այն երբեք ոչինչով չեմ փոխանակի: Ոմանց համար քաղցկեղը սարսափելի հիվանդություն է, որը մահվան է տանում, ուրիշների համար այն ամոթալի հիվանդություն է, որը փորձում են գաղտնի պահել, ուրիշները չեն ուզում «Ք» տառը օգտագործել, ուստի դրա փոխարեն «սարսափելի հիվանդություն» եզրույթն են օգտագործում: Ոմանց համար էլ այն անեծք է:

Մի անգամ «Քաղցկեղը իմ օրհնությունն է» վերնագրով հոդված հրապարակեցի, և մի տիկին զանգահարեց ինձ՝ հարցնելու, թե ինչպե՞ս կարող եմ քաղցկեղը օրհնություն անվանել: Ես նրան պատասխանեցի՝ ասելով, որ իմ քաղցկեղը ի՛մ օրհնությունն է: Թու՛յլ տվեք բացատրել, թե ինչ նկատի ունեմ:

Քաղցկեղը կարող է մեզ ավելի մոտեցնել Աստծուն: Մենք սկսում ենք Նրան բոլորովին այլ կերպով ճանաչել: Հոբի հետ միասին կարող ենք ասել. «Ականջի լսելով լսել էի Քո մասին, բայց հիմա աչքերս տեսնում են Քեզ» (Հոբ 42:5): Բժիշկները երեք տարուց պակաս կյանք գնահատեցին, բայց Աստված այլ ծրագիր ուներ:

Դժվար ժամանակներում այն բաներից մեկը, որ կարող ենք անել, Նրա խոստումներից կառչելն ու դրանք երբեք բաց չթողնելն է: Սատանան գուցէ փորձի խեղաթյուրել ճշմարտությունը մեր մտքում: Ընկերները թերևս փորձեն նույնը անել: Մի մտերիմ ընկեր ունեի, ով ասել էր. «Դադարեցրո՛ւ ամեն ինչ, փակի՛ր խանութդ, ավարտի՛ր

ծառայությունդ, գնա՛ և քեզ համար լողափին տուն գնի՛ր և ամբողջ օրը պառկի՛ր արևի տակ»: Այս դեպքը եղել է 13 տարի առաջ, և եթե ես ընդունեի նրա խորհուրդը, ապա վաղուց մահացած կլինեի:

Այս 13 տարիների ընթացքում Հիսուսի համար ապրելու օրհնությունն եմ վայելել: 15 անգամ Հայաստան եմ ճամփորդել, երեք զավակներս ամուսնացել են, և Աստված օրհնել է մեզ՝ պարգևելով հինգ թոռնիկ: Ավստրալիայում և Հայաստանում մեր ծառայությունը օրհնված ու ընդլայնված է: Իմ ամենօրյա խորհրդածությունների ձայնագրությունները արդեն 500-ից ավելի են:

Դեղամիջոցս 46 տարբեր կողմնակի ազդեցություններ ունի, և մինչ դրանք մաշում են մարմինս, ես ամեն օր նախանձախնդրությամբ և նոր երգով եմ արթնանում: Երբեմն զարմանում եմ, թե որտեղի՞ց է գալիս այս եռանդը: Տերը ինչպե՞ս է նման նախանձախնդրություն պարգևում: Իսկապես Նրա ճամփաները անքննելի են:

Ես կույր չեմ իրականության հանդեպ. ես տեսնում եմ, թե ինչ է կատարվում մարմնիս հետ, բայց դուք պետք է տեսնեք իմ հոգին: Մեր տկարության մեջ է, որ տեսնում ենք Նրա զորությունը: Հետազոտություններիս արդյունքները այդքան էլ ոգևորիչ չեն, մարմինս տկարանում է, սակայն ներքին խաղաղությունը հարատևելու ուժ է տալիս ինձ: Այս պահին յոթ հիվանդությամբ եմ տառապում: Օրական 13 դեղահաբ և 2 ներարկում եմ ընդունում: Ես գիտեմ, որ երկրի վրա իմ օրերը հաշված են, բայց անհամբեր սպասում եմ հավիտենականությանը՝ մի վայր, որտեղ հիվանդություն, ցավ կամ արցունք չկա:

Որքա՜ն եմ վիճաբանել Աստծո հետ՝ ասելով. «Եթե ես աշխարհը ստեղծեի, ապա երբեք թույլ չէի տա նրա մեջ դժվարություններ, ցավ, հիվանդություն կամ մահ գտնվեր»: Եվ Աստված պատասխանեց ինձ՝ հիշեցնելով, որ Ինքը ճիշտ այդպես էր արել: Նա Ադամին ու Եվային դրել էր Եդեմի պարտեզում, որտեղ ո՛չ ցավ, ո՛չ հիվանդություն և ո՛չ էլ մահ կար: Այնուամենայնիվ, մարդիկ ձախողվեցին, և մեր մեղքը աշխարհը հասցրեց այս անհանգիստ վիճակին: Սակայն Աստված Իր սիրո ճոխությամբ մեզ ուղարկեց Իր միածին Որ-

դուն, որպեսզի ով որ Նրան հավատա, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա:

Ճառագայթ ընդունելու համար անհրաժեշտ է երկու շաբաթ առավոտյան ժամը 7:00-ին հիվանդանոցի նկուղ գնալ: Մարդիկ ահ ու սարսուռ են վերապրում այնտեղ: Մարդիկ վերելակով են իջնում նկուղ ու նրանց դիմաց բացվում է թույլ լուսավորություն ունեցող ցուրտ ու մեծ սենյակը, որտեղ պատուհաններ չկան: Աթոռները տեղադրված են մեծ շրջանակի մեջ, որոնց վրա նստած են ամեն տարիքի մարդիկ: Շատերը հիվանդանոցային զգեստներով են: Որդիները գրկած են իրենց մայրերի տկար մարմինները, մայրեր գրկած են իրենց դեռահասներին, որոնց տկար մարմինների վրա մազ չի մնացել, հոնքեր չկան: Ձյան պես ճերմակ երեխաները լալիս են: Սա է ստորգետնյա սենյակի մղձավանջը:

Բոլորս նստում ենք սպասասրահում, ամեն մեկս վախեցած հայացքով նայում է դիմացինի դեմքին՝ կարծես թե մտածելով, թե հաջորդը մեզանից մահանալու ում հերթն է: Կողքս նստած էր հիսունն անց մի տղամարդ, ով հարցրեց ինձ, թե ինչպես են գործերս: Մի քանի բառով փորձեցի պատմել իմ՝ Տիրոջս հանդեպ ունեցած հավատքիս մասին: Նա էլ պատմեց, թե ինչպես է կորցրել իր աշխատանքը, թե իր կինը թողել է իրեն, և ընկերներն այլևս չեն հետաքրքրվում իրենով: Ասաց, թե բուժումն ավարտելուց հետո երբ տուն է գնում, բանտարկվում է տան չորս պատերի մեջ՝ մեկուսացած, ճնշված: Ցավոք սրտի, ճառագայթ ընդունելու հերթը նրան հասավ, և մենք չկարողացանք շարունակել մեր զրույցը, բայց նրա հուսահատությունը մեծ ազդեցություն թողեց ինձ վրա:

Սիրելի՛ բարեկամ, որտե՞ղ ես այսօր: Ինչի՞ դեմ ես պայքարում: Տեր Հիսուսին ունե՞ս կյանքիդ մեջ:

Ստորգետնյա սենյակի անկյունում տեղադրված էր առողջապահության վարչության թերթիկների սեղանը: Վերնագրերը զանազան էին, ամեն տեսակի քաղցկեղի մասին թերթիկներ կային: Ես ընտրեցի շագանակագեղձի քաղցկեղի մասին թերթիկը: Ետևի էջի վրա այսպես էր գրված. «Եթե որևէ հավատքի պատկանող հոգևոր անձնավորություն եք, ապա խստորեն խրախուսում ենք ձեզ հետևել ձեր

հավատքին, քանի որ այն մեծապես կօգնի ձեզ»: Ես այնքան ցնցված էի՝ այս տողերը կարդալով, քանի որ մարդիկ փորձում են դպրոցներում դադարեցնել սուրբգրությունը սովորեցնելն ու աղոթելը, փորձում են ամենօրյա կյանքից հեռացնել հոգևոր բաների մասին ցանկացած հիշատակում, իսկ հիմա, երբ մահվան մահճի վրա ենք, նրանք քաջալերում են մեզ հենվել մեր հոգևոր սկզբունքների վրա:

Հիսուսն ասում է. «Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և Ես ձեզ հանգստություն կտամ» (Մատթ. 11:28): Շատ դժվար է, երբ մարմինս չի գործում, և ուժս շուտ է սպառվում: Դժվարությամբ եմ ոտքի կանգնում ու քայլում: Սկսել եմ ձեռնափայտով քայլել: Մի օր աղոթքիս մեջ այսպես ասացի Տիրոջը. «Հա՛յր, ինչո՞ւ կտրեցիր իմ ձեռքերը»: Նրա անմիջական պատասխանը եղավ. «Ես միայն խուզեցի քո թևերը»: Ես սկսեցի ծանր հեկեկալ: Երբ փոքր տղա էի, աղավնիներ էի պահում: Նրանց կրթելու գործընթացում ներառված էր նրանց թևերը խուզելը, որպեսզի կողքս մնային: Մեր տկարություններն ու հիվանդությունները մեզ ավելի են մոտեցնում Իրեն: Դրանք օգնում են մեզ՝ կյանքը այլ տեսանկյունից տեսնելու:

Պատասխանս հետևյալը եղավ. «Տե՛ր, շնորհակալ եմ Քո սիրո համար»: Այո՛ բարեկամս, դու նույնպես կարող ես զգալ, որ ձեռքերդ կտրված են, բայց Տերը պարզապես թևերդ է խուզել, որպեսզի միասին Իր մեջ մնանք:

Մեր ճանապարհորդությունը ավարտված չէ, և որքան ավելի մոտ լինենք Նրան, այնքան ավելի կճաշակենք Նրա քաղցրությունը: Մեր հաղթանակը Քրիստոսի մեջ է, և մեծ փափագով սպասում ենք Նրա ներկայության մեջ գտնվելուն: Մի օր ծունկի ենք գալու Նրա առջև ու մեծ ուրախությամբ երկրպագելու ենք Նրան՝ ազատ լինելով ցավից, հիվանդությունից և այլ դժվարություններից:

Հ. Գ.